ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Անուն, ազգանուն՝**

Հեթում Համամճյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային գործընթացի կառավարման վարչության հատուկ ծախսերի ֆինանսական ծրագրավորման բաժնի պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

ք. Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) 2018 թվականի հունիսի 24-26-ը:

4. **Հրավիրող կողմը՝**

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերության քարտուղարություն:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

ՀԱՊԿ ֆինանսատնտեսական գործունեությունը կանոնակարգող որոշ փաստաթղթերի նախագծերի քննարկման նպատակով ս.թ. հունիսի 25-26-ը Ռուսաստանի Դաշնության ք. Մոսկվայում անցկացվող ՀԱՊԿ անդամ-պետությունների շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների փորձագետների խորհրդատվություններին մասնակցություն:

6. **Քննարկված թեմաները՝**

«Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերության 2019 թվականի բյուջեի մասին» և «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերության 2017 թվականի բյուջեի կատարման հաշվետվության մասին» ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի որոշումների նախագծեր:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

ՀԱՊԿ քարտուղարությունում ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի տեղակալ Վ. Սեմերիկովի նախագահությամբ անցկացված խորհրդատվությունների ժամանակ տեղի են ունեցել Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի և Տաջիկստանի Հանրապետությունների, Ռուսաստանի Դաշնության, ինչպես նաև ՀԱՊԿ քարտուղարության և ՀԱՊԿ միացյալ շտաբի փորձագետների հետ հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են ՀԱՊԿ գործունեությունը կանոնակարգվող վերը նշված փաստաթղթերի նախագծերը, ինչպես նաև

վերջինների վերաբերյալ ՀԱՊԿ անդամ-պետություններից ստացված առաջարկությունները և դիտողությունները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Փորձագետների խորհրդատվությունների արդյունքների մասին կազմվել է ՀԱՊԿ ֆինանսատնտեսական գործունեությունը կանոնակարգող հարցերով ս.թ. հունիսի 25-26-ը Ռուսաստանի Դաշնության ք. Մոսկվայում ՀԱՊԿ անդամ-պետությունների շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների փորձագետների խորհրդատվությունների համապատասխան արձանագրություն (կցվում է):

Խորհրդատվությունների արդյունքում փորձագետները հնարավոր համարեցին ՀԱՊԿ 2019 թվականի բյուջեի նախագծով հայտավորված ծախսերի ծավալի կրճատում շուրջ 9,9 մլն ՌԴ ռուբլու չափով: Նշված գումարից շուրջ 7,8 մլն ՌԴ ռուբլին ՀԱՊԿ 2019 թվականի բյուջեի նախագծով նախատեսված էր ՀԱՊԿ Միացյալ շտաբի գործունեության կատարելագործմանն ուղղված միջոցառումների ֆինանսավորմանը, իսկ 2,1 մլն ՌԴ ռուբլին ՀԱՊԿ 2019 թվականի բյուջեի նախագծով նախատեսված էր ՀԱՊԿ քարտուղարության ծախսերի ֆինանսավորմանը: Փորձագետների կողմից առաջարկվող կրճատումները հիմնականում պայմանավորված էր ռուբլու փոխարժեքի վերանայմամբ, գործուղման քանակների կրճատմամբ, տրանսպորտային ծառայությունների, կապի ծառայությունների, կոմունալ ծառայությունների, հիմնական միջոցների և նյութական արժեքների գծով ծախսերի կրճատմամբ:

Բացի այդ, փորձագետների կողմից առաջարկվեց վերանայել նաև «Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության մասին» ՀԱՊԿ ՀԱԽ որոշման նախագծով սպարտակիադայի անցկացման համար նախատեսված գումարի հարցը, նկատի ունենալով, որ վերջինիս վերաբերյալ իրավական հիմքերը բացակայում են: Քննարկումների արդյունքում ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի տեղակալ Վ. Սեմերիկովի կողմից առաջարկվեց բյուջեի նախագծում պահպանել սպարտակիադայի անցկացման համար նախատեսված գումարը, մինչև ՀԱՊԿ ՀԱԽ որոշման նախագծի ընդունումը, իսկ վերջինիս չընդունվելու դեպքում առաջարկվեց նշված նպատակով նախատեսված միջոցները հանել ՀԱՊԿ 2019 թվականի բյուջեի նախագծից:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները, եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպման ընթացքում կատարված առաջարկությունները և դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները ներառված են արձանագրության մեջ:

10. Գործուղվողը՝ Հեթում Համամճյան:

11. Ստորագրությունը, ամսաթիվը՝ **28.06.2018թ.**